№ 80 ՀԻՆԳՇԱԲԹԻ 17-ԱՊՐԻԼԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 17 ԱՊՐԻԼԻ № 80

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲ.

Սպրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը—85 կ.:
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պիտիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

1914 թուի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ԶՐԻՆԱՒԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկին ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրթէնի:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սարուխանովօ-Կուրինսկի Ակցիօներական Ընկերութեան Վարչութիւնը

խնդարհաբար խնդրում է պ. պ. բաժնետէրերին շնորհ բերել

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,

որ տեղի կունենայ սոյն ապրիլի 20-ին, ցեր. ժամը 12-ին Բաքուում, Վարչութեան կացարանում (Մօլոկանսկայա փող. № 4, տ. Պլոտնիկովի):

Զբաղմունքի առարկաներն են.

1) Վարչութեան զեկուցումը Ընկերութեան գործերի դրութեան մասին և նրանից բղխող հարցերի որոշումները:
2) Քննութիւն և հաստատութիւն անցեալ հինգերորդ (1913) շրջանառութեան տարվայ հաշիւի և հաշուեկշռի:
3) Քննութիւն և հաստատութիւն 1914 թ. ելից նախահաշիւի և գործունէութեան ուղղուածման:
4) Ընտրութիւն Վարչութեան անդամների և կանդիդատների ի տեղի հերթով դուրս գնացածների:
5) Ընտրութիւն Վերաստուգիչ Ճանձնաժողովի անդամների:
6) Քննութիւն և հաստատութիւն Վարչութեանը տրվող հրահանգի:
7) Քննութիւն և վճռումն Եալա-Նուշի երկաթուղ. գծից երկու երկաթ. ճիւղ անցկացնելու հարցի. I ճիւղը՝ Թարթառ կայարանից մինչև արքունական անտառները, մօտ 75 վերստ. II ճիւղը՝ Խաչէն կայարանից մինչև Արաքս գետը, մօտ 105 վերստ:
8) Քննութիւն և վճռումն այն հարցերի, որոնք կարող են ծագել թէ նախ քան ժողովը և թէ ժողովի ընթացքում:

Եթէ ժողովը նշանակված օրը չը կայանայ, այդ դէպքում մայիսի 4-ին 1914 թ. նոյն ժամին և նոյն տեղը տեղի կունենայ երկրորդ Ընդհանուր Ժողով, համաձայն Կանոն. § 66-ի: Այդ ժողովը կը համարվի օրինական՝ չը նայած ներկայացված բաժնեթղթերի քանակին:

Բաժնեթղթերի ընդունելութիւնը, որ մատնանշված է Կանոն. § 58-ի մէջ, նոյնպէս և բանկերի վկայագրերի (ստացագրերի)—կը կատարվեն Վարչութեան կացարանում ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, ցեր. ժամը 12—2-ը, մինչև ապրիլի 9-ը 1914 թ.:

(հ.) առ. 330. 2—2

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ՉՈՒՐԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)

Այսօր, հինգշաբթի, ապրիլի 17-ին
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.
Մասնակց. դերասանների
Կը ներկայացնէ

ԱՆՅԱՅՏ ԿԻՆ

Պիէս 4 գործ. և 5 պատկ. թարգմ. Մաժակի
Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին:
Տեղերի գները 5 կ.-ից մինչև 50 կ.:
Ռէժիսսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամ՝
Գ. ՍԱՐԵԱՆ

«ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԻ» ներկայացումը տեսնիկական բարդութիւնների պատճառով յետաձգվում է ամսիս 26-ին: Վերցված տոմսակները իրանց զօրութիւնը պահում են «Հին Աստուածների» համար:

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ԴԵԿՕՐԱՑԻԱՆԵՐ

առ. 336. 1—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ճեռբին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (ստաціոնարն) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վասիլովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(հ.կ.) առ. 868. 100—46

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ

(Աստիսեանց Թեատրի պրոֆ. Պօզնէրի)

վերադառնալով արտասահմանից, ներկայ տարվայ մայիս ամսից կը վերանորոգէ հիւանդների ընդունելութիւնը ՊԵԱՏԻ-ԳՕՐՍԿՈՒՄ:

(կ. հ.) առ. 104. 50—20

ՑԻՐԿ

Ֆ. ԻՒՊԱՏՕՎԻ

Այսօր, հինգշաբթի, էկսպրա-օրդինար մեծ ներկայացում մասնակցութեամբ խմբի առաջնակարգ արտիստների: Այսօր, հասարակութեան սիրելիներ՝ ժամանակակից երաժշտ. էկսցենտրիկներ պ. պ. Բօպէտները կը կատարեն իրանց հարուստ ըէպէրտուարից ամենալաւ № №. Ընդհանուր ժօնգլէրներ Գանիօվսկիները, որոնք արժանացել են հանդէս գալու Բարձրագոյն անձերի առաջ, այսօր կը կատարեն շատ գժուարին տրիկներ: Յայտի ակրօբատներ Բոսսիներները կը կատարեն մի շարք սալտօ-մորտալներ: Այսօր կը լինի նաև կօր-դը-բալէաք՝ դեկադարու

Երեկոյեան բիւլլետէնը յայտնում է, որ կայսրի սրտի գործունէութիւնը բաւարար է։ Ախորժակն ու ընդհանուր ինքնագիտակցութիւնը լաւ է։ Կայսրն ընդունեց Ֆրանց-Ֆէրդինանդին և այլ անձանց։

Ֆրանց-Ֆէրդինանդը մեկնեց Բուդապէշտ։

ՄԱԴՐԻԴ.—Սենատ։ Արտաքին գործերի մինիստրը ասաց, որ կառավարութիւնը մեծ նշանակութիւն է տալիս Թագաւորի Արգենտին գնալուն, որովհետև այնտեղ ընակվում են միլիոնից աւելի սպանացի, որոնք խանդավառօրէն սպասում են Թագաւորին։

ՏՕԿԻՕ.—Նոր կաբինէտը վճռեց ընդունել 1913 թ. բիւջէն 1914 թուի համար, որով յաւելեալ գումար մնալու է 18 միլիոն, որպիսի գումարը անցեալներում մնացած 77 միլիոնի հետ գործադրվելու է մասամբ զինուորական այժերը ընդարձակելու համար։

Պաշտօնական եղան սէյիլկայ կուսակցութեան 7 նահանգապետ՝ կաբինէտը պաշտպանող կուսակցութիւնները ուժեղացնելու նպատակով։

ՄՕԶԱՆՊՕ.—Կօրէացիների ամբոխը յարձակվեց եապոնացի հողաչափների վրա։ Կան շատ սպանվածներ և վիրաւորներ։ Կանչված են զօրքեր։

ՊԱՏԵՐԱԶՄ ՄԻԱՑԵԱԼ-ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՄԵԿՍԻԿԱՑԻ ՄԻՋԵՒ

(Պետ. Հեռ. Գործ.)
15 ապրիլի

ՎԷՐԱԿՐՈՒՑ.—Խուէրտան պահպանում է երթևեկութիւնը բոլոր մէկսիկական երկաթուղագծերի վրա, բացի Պանամերիկանից։

ԼԱՐԷԴՕ.—Մէկսիկական ֆեդերալիստները փորձեցին ներս խուժել դէպի հիւսիս 20 մղոն տարածութեամբ ընկած տեղը, բայց ցիրուցան եղան ամերիկացիներից, կորցնելով 10 հոգի սպանված և 20 վիրաւոր։ Ամերիկացիք կորուստ չունեն։

ԲՐԱՈՈՒՆՍՎԻԼ (Տէքսաս).— Մօնտերէյը գրաւելիս սպանվեցին 100 և վիրաւորվեցին 200 ապստամբ։ Ֆեդէրալ զօրքերը կորցրին 300 մարդ։

ՎԷՐԱԿՐՈՒՑ.—Մէսիկայում վերջին օրերս նկատվում է աւելի բարեկամական վերաբերմունք դէպի օտարազգիք։ Թուռցիկներով ժողովրդին առաջարկվում է պաշտպանել ամերիկացիներին։

Խուէրտան մեղադրվում է ամերիկացիների հետ միջադէպ ստեղծելում։ Լուրերի համաձայն՝ ցոյցից յետոյ Խուէրտան թաղնվել է արտասահմանեան միսիայում։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.— Մէկսիկական արտաքին գործերի մինիստրը յայտնեց Բրայանին, որ նրա կառավարութիւնը հաճայն է ընդունել միջնորդութեան սկզբունքը։

(Լրագիրներից)

Թշնամական գործողութիւնների սկիզբը Մեկսիկայում արտակարգ յուզում առաջացրեց։ Ամենուրեք ցոյցեր են լինում, անէծքներ են տեղում ամերիկացիների հասցէին։ Ամենուրեք եռանդուն գործունէութիւն է թագաւորում։ Զօրքեր են հաւաքվում։ Հրատարակված կոչերով ժողովրդին հանգստութեան են հրաւիրում և օտարերկրացիների անձեռնմխելի պահելուն։ Լարված դրութեամբ սպասվում են անգլիական հիւպատոսի գալստեան։ Չը նայած ընդհանուր յուզմունքին, Խուէրտա հանգիստ կերպով այցելում է սրճարանները։

Ամերիկական էսկադրան բռնեց գերմանական մի նաւ, որը զինամթերք էր տանում Մեկսիկա, Խուէրտայի զօրքի համար. գրաւված է 200 գնդակացիր և 15 միլիոն փամփուշտ։ Ամերիկական կառավարական շրջաններում այդ առիթով անբաւականութիւն է տիրում Գերմանիայի դէմ։

Գերմանական լրագիրները հեգնում են թէ ինչպիսի իմպերիալիստական արկածախնդրութեան է հասել զիտական խաղաղասէր Վիլհելմը։ Խուէրտան լաւ արեց, որ հրաժարվեց հպատակվել Ամերիկային. այժմ իր կողմն ունենալով ապստամբներին, նա, թերևս, յաղթանակող հանդիսանայ։

ՈՒԼՍՏԷՐԵԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
15 ապրիլի

ԼՕՆԴՕՆ.—Լօրդերի պալատ։ Լէնսդաունը հարցրեց, թէ յիրաւի մտադրութիւն կայ զօրքեր ուղարկել Դուբլինից և Կէրրօգից Բէլֆաստ, ուրիշ զօրքեր ևս ուղարկվելու են արդեօք, կառավարութիւնը ապատում է արդեօք անկարգութիւններ։ Ուլստէրում։ Կրիւն պատասխանեց, որ զօրքերի տեղափոխութեան մասին կառավարութիւնը տեղեկութիւններ չունի և ոչինչ կարող է հաղորդել զօրքերի ապագայ շարժումների մասին, որոնք գուցէ արդասիք լինեն հանգամանքների։ Իրլանդիայի զօրքերի ընդհանուր հրամանատարը իրաւունք ունի առաջ բերել զօրքերի տեղափոխութիւն՝ առանց կառավարութեանը այդ մասին իրազեկ անելու։ Պատասխանելով երրորդ հարցին, Կրիւն նկատեց, որ այդ հարցը աւելի շուտ պէտք է տան կառավարական կուսակցութեան անդամները։

Գեներալ Մակլէոդին, որ ստանձնել է Բէլգիատի ռոտիկանատեսի պաշտօնը, կարգադրեց խուզարկութիւն կատարել այն բոլոր ճանապարհների վրա, որոնցով աւտոմօբիլները քաղաք են դիմում։ Ռոտիկանութիւնը ուժեղացված է քաղաքում։ Մինիստրների խորհրդում վճռվեց ձեռք առնել լուրջ միջոցներ՝ Ուլստէրում կարգուկանոնը պահպանելու և դէպք փոխադրողներին պատժելու։ Քաղաքի մօտ շինութիւններ են յատկացվում եկող զօրքերի համար։ Հինգ դրահանաւ և մի ականաւոր գիշերս եկան Լարն նաւահանգիստը։ Եօթ զրէյսօուտ այլ ռազմանաւերով եկել են Լամշը։

Օստէն Չեմբերլէնը առաջարկեց պարզաբանք յայտնել կառավարութեանը Ուլստէրի հարցում ցոյց տուած գործողութիւնների համար և պահանջեց դատարանով քննել կառավարութեան ձեռնարկութիւնները։ Զէրչիլը, պատասխանելով, ասաց, որ Կարսոնը և Կրէգը պահանջում են դատ սկսել այն անձանց դէմ, որոնք պատասխանատու են օրէնքն ու կարգուկանոնը պահպանելու համար, այդ նոյնն է թէ յանցագործները առաջարկեն պաշտպանք յայտնել ոստիկանութեանը (ծիծաղ մինիստրական աթոռներում)։

Մի հեռակայ գունդ գնդակներով ուղարկվեց Լօնդոնդէրի։

ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
15 ապրիլի

ԱԹԻՆՔ.—Յոյն զօրքերը բոլորովին հեռացան Հիւսիսային Եպիրոսից։

Կ. ՊՕԼԻՍ.—Յոյների՝ Թրակիայից գաղթելու վերաբերմամբ հրատարակված պաշտօնական հաղորդագրութեան մէջ բերված են հետեւեալ պահանջները. 12,000 յոյն, փախչելով Թրակիայից, նաւակներով յորդորում են իրանց ընտանիքներին ևս գաղթել։ Յոյները գաղթում են Ադրիանուպոլսից, երկիւղ կրելով մահմեդականների վրէժից պատերազմի ժամանակ մահմեդականների տները քարուքանդ անելուն համար։ Յոյները գաղթում են նաև՝ յոյս ունենալով ձեռք ձգել այն մահմեդականների հողերը, որոնք, թւով 200,000, արտաքսվեցին նոր նուաճված յունական և սերբիական հողերից։ Հաղորդագրութեան մէջ ասված է, որ բոլոր իշխանութիւններին պատուիրագրված է արգելք լինել յոյների գաղթին։ Նաւերին արգելված է փոխադրել գաղթականներին Հէրակլէից և Միդիայից։ գաղթականները պէտք է դիմեն դէպի Բօղոստոս տեղական իշխանութիւնների թոյլտուութեամբ։

ՍՕՖԻԱ.—Բուլգարական հեռագրական գործակալութիւնը կարուկ կերպով հերքում է Աթէնքի լրագիրների այն տեղեկութիւնը, թէ իբր Թիւրքիայի և Բուլգարիայի մէջև պայմանագիր է կնքվել ընդդէմ Յունաստանի։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՑԽՍՏԱԳՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
15 ապրիլի

ԲԵՐԼԻՆ.—Բիւջէտային մանամաջողովում արտաքին գործերի մինիստրութեան նախահաշուի տեղեկագրի՝ ազգային-լիբերալների պարագլուխ Բասսէրմանը խօսեց ընդհանուր քաղաքական դրութեան մասին և ընդգծեց երբեակ դաշնակցութեան կայունութիւնը, թէև մամանաչեց Ունգարիայում տիրող—դաշնակցութիւնը անկապատ—հոսանքների վրա. անգլիական թագաւորի Պարիզ այցելելը որոշ երկիւղ առաջ բերեց, բայց անգլիական պետական գործիչների վարմունքը այդ տեսակէտից զսպված երևաց։ Պոլսակովի և Պոտսդի գործերը ամօթ են բերում Գերմանիային. երկու դէպքերը չը նպաստեցին ռուս-գերմանական յարաբերութիւնների բարեւաւման։ Տեղեկագրերը խնդրում է արտաքին գործերի մինիստրին բացատրութիւն տալ օդանաց Բերլինների գործի առիթով և մամանշում է, որ առևտրական պայմանագրերի քաղաքականութիւնը ստեղծում է անհրաժեշտութիւն՝ մտաւորական մրցումն ունենալու Ռուսաստանի և Գերմանիայի միջև։ Ապա տեղեկագիրը Բասսերմանը յայտնեց, որ գերմանական զինուորական միսսիայի գործը առաջ բերեց Թիւրքիայի դժգոհութիւնը։ Ստատսսեկրետար Ֆօն-Յագովը մի շարք բացատրութիւններ տուեց արտաքին քաղաքականութեան հարցերի նկատմամբ և յիշեցրեց ամենից առաջ, որ երբեակ դաշնակցութեան պետութիւնների միջև տիրում է լիակատար համաձայնութիւն մանաւանդ բալկանեան հարցում։

Բէյլիստոգում ստատս-սեկրէտարի օգնականն Յիմմէրմանը ասաց, որ Ռուսաստանը մինչև օրս մասնակցութիւն չունէր Դէպ-Պիբլիկի վարչութեան մէջ։ Այժմ այդ ապրիլով բանակցութիւններ են վարվում Ռուսաստանի հետ։

Բէյլիստոգի բիւջէտային մանամաջողովում Ֆօն-Յագովը Կ. Պոլսում գերմանական զինուորական միսսիա նշանակելու հարցի առիթով բացատրութիւններ տուեց, յայտնելով թէ Ռուսաստանը բողոքեց ոչ թէ միսսիայի դէմ, այլ Լիմանին առաջին զօրաբանակի հրամանատար կարգելու դէմ, որ, ըստ Ռուսաստանի, տալիս է գերմանացի գեներալին Կ. Պոլսի վրա իշխելու իրաւունք։ Գերմանիան պատասխանեց այդ բողոքին։ Բանակցութիւնները չափազանց հեռուն գնացին և հարցը կարող է քննվել միայն տեղում։ Հարցը սուր կերպարանք ստացաւ մամուլի կատաղի արշաւանքի պատճառով, որի պարագլուխը «Новое Время»-ն էր։

Լիմանը զօրաբանակի հրամանատարի պաշտօնը չորս շաբաթ կատարելուց յետոյ թողեց այն, պահելով վերատեսչի (գեներալ-տեսուչ)։ Ֆունկցիաները։ Բացի զինուորական միսսիայից, մի շարք այլ միջադէպեր սուր կերպարանք տուին լրագրական բանակռուին Գերմանիայի և Ռուսաստանի միջև։ Եաշվը շատ է ցաւում, որ լոյս տեսաւ «Կիօլնիշէ Ցայտունգի» յայտնի յօդուածը, որ բնաւ չէր բղխում պաշտօնական աղբիւրից։ Այնուհետև մինչդամայն սուտ երևաց լրագրական այն տեղեկութիւնը, թէ իբր մինիստր Սազոնովը Պետ. Դումայի մանամաջողովում յայտնել է, որ Գերմանիան վերջին առևտրական պայմանագիրը կապկում է մանակ դիտաւորեալ կերպով մղեց Ռուսաստանին քաղաքական դժուարութիւնների գիրկը։ Պոլսակովի գործի առիթով Գերմանիան չը տատանվելով ցուցակցութիւն յայտնեց ռուսաց կառավարութեանը այդ միջադէպի առիթով։ Ցնշելով ուրիշ միջադէպերի մասին, Ֆօն-Յագովը ասաց, որ ռուսաց և գերմանական կառավարութիւնները կամենում են պահել հինաւուրց բարի բարեկամական յարաբերութիւնները, և յոյս կայ, որ Գերմանիայի և Ռուսաստանի հին յարաբերութիւնները կը մնան՝ չը նայած հասարակութեան ու մամուլի մէջ տեղի ունեցող ընդդիմախօսութիւններին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

— o —

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Էջմիածնից մեզ գրում են.

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ստացել է կարևոր գրութիւններ հայկական հարցի և Բիթլիսի քիւրդական շարժումի մասին։ Կովկասի փոխարքան մի առանձին պաշտօնական գրութեամբ ուղարկել է Վեհ. Կաթողիկոսին, արտաքին գործերի մինիստր Սազոնովի յանձնարարութեամբ, հայկական ըէֆորմների պաշտօնական ծրագիրը, որի ընագիրը Ֆրանսերէն է, ռուսերէն թարգմանութեամբ։ Վեհ. Կաթողիկոսը մտադիր է յարմար և պատշաճ եղանակով հայ ժողովրդի և եկեղեցու երախտագիտութիւնը արտայայտել Կայսերական կառավարութեանը մարդասիրական ջանքերի համար։

Թիւրքիայի հայոց պատրիարք Զաւէն արքեպիսկոպոսը և Բիթլիսի առաջնորդ Սուրէն վարդապետը, ի պատասխանի Վեհ. Կաթողիկոսի հեռագիրների, որոնցով Նորին Վեհափառութիւնը տեղեկութիւններ էր պահանջել հայ ժողովրդի ապահովութեան և վիճակի մասին, ուղարկել են մանրամասն զեկուցագրեր Բիթլիսում ծագած քիւրդական շարժման և տեղի ունեցած պատահարների մասին։ Ըստ այդ զեկուցագրերի, թէև սկզբում մեծ երկիւղ և սարսափ է եղել տիրում հայերի մէջ, բայց յետոյ իմացվել է, որ քիւրդական շարժումը հայերի դէմ չէ, այլ մի քանի քիւրդ ցեղապետների գործն է, որոնք որոշ իրաւունքներ են պահանջում իրանց համար թիւրքաց կառավարութիւնից։ Բիթլիսի թիւրքերի մի մասն ևս միացած է նրանց հետ, իսկ մի մասը, հաւատարիմ մնալով կառավարութեան, դէմ է եղել։ Այդ վերջիններին կատաղարութիւնը զէնք է բաժանել. 150 հրացան ևս 10 արկղ փամփուշտներով կառավարութիւնը բաժանել է Բիթլիսի հայերին։ Ապստամբ քիւրդերի պարագլուխ Ծերուկ մօլա Սէլիմը, յաղթվելով կառավարական զօրքից, փախել ապաստանել է ռուսաց հիւպատոսարանը, խնդրելով ընդունել իրան և իր ցեղը ռուսական հպատակութեան մէջ։ Հայերից կուռ ժամանակ սպանվել են 2 զինուոր և վիրաւորվել է պատահաբար մի անձն։

Երկար տարիներ ուսանողները ստացել են նպաստ իրանց ընկերներից փոխարինաբար, երբէք չը դարձնելու համար։ Աւարտելով իրանց ուսումը, նրանք մոռացել են իրանց ազգը, իրանց քաղցած ընկերներին և չեն վերադարձնում իրանց պարքը։ Ասենք՝ շիտակ նրանք գողանում են...

Գողութիւն չէ ապա ինչ է պարքը չը վերադարձնելը ազգաս ուսանողութեան դրամարկղը։

Հեռու Մոսկվայում, Պետերբուրգում, Խարկովում ընկերներդ քաղցից մեռնեն, իսկ դու այստեղ լաւ ուտես, խմես, ապրես, քէֆ անես, փողը դիպես, տներ շինես...

Գողութի՞ւն է, գողութի՞ւն...

V

Բայց կայ ուսանող և կան ուսանողներ, և բոլորին հաւասար նայել անկարելի է։ Գաղափարականները կան և այժմ թէև նրանց թիւը փոքր է, համեստ, չնչին, բայց նրանք ապրում են, կան։ Նրանք կը շատանան և իրանց ձայնը կը բարձրացնեն ուժեղ...

Կեղտը և փրփուրը անցողակի և պատահական բաներ են։ Կանցնեն-կերթան, ինչպէս եկան անհամ հովերով...

Զէ՞ որ գարնան և խայթող եղիճը սիրուն է և գեղեցիկ... Իսկ ուսանողութիւնը դարունների գարունն է...

Եւ Ցարութիւնեանները մեզ չեն յուսահատեցնում։ Նրանք մեր գիշերվայ մութն են։ Այն հովերը քշեցին և բերին նրանց մեզ և հովերը կանցնեն, կերթան, և Ցարութիւնեաններն էլ նրանց հետ...

Կարծես գիշերը արդէն կարճանում է, քչանում և չքանում... Կը դայ առաւօտը, հայ ուսանողութեան պայծառ, գեղեցիկ, զով առաւօտը... Սկզբից այդ առաւօտը կը լինի ամպամած։ Ամպերն էլ կանցնեն... Կը բացվի կապոյտ երկինքը...

Կապոյտ երկինքը հայ ուսանողութեան...

Ցարութիւնեաններն էլ պէտք են...

Եթէ չը լիներ խաւարը, ինչպէս մենք հասկանայինք, թէ ի՞նչ է լոյսը։

Եթէ չը լիներ գիշերը, ցերեկը ի՞նչ հրապոյր կարող էր ունենալ։

VI

Ասենք շիտակ՝ մենք բոլորս փոքր Ցարութիւնեաններ ենք եղած...

Փաստաբաններ, բժիշկներ, ինժեներներ և այլ մասնագէտներ՝ լաւ ուտում ենք, լաւ ապրում, փողեր դիզում, հարուստ օժիտների հետևից վազում և միայն հարստանալու վրա օր և ցերեկ մտածում... Գաղափարնե՞ր, հեռու մեզանից։ մենք նրանց շպրտել ենք՝ իբր մաշված, հին, կեղտոտ ձեռնոցներ։ մոռացել ենք մեր խոստումները, մատնել ենք մեր գաղափարները՝ ինչպէս Յուդան Քրիստոսին՝ և մոռանում ենք մեր ազգը...

Ազգը, որ սպասում է մեզ և հաւատում... Հաւատում, որ մենք կը գանք և նրանց կը փրկենք տգիտութիւնից ու արատներից և հազար ու մէկ դարդերից ու ցաւերից...

Ինչ ազգ։ մենք մոռանում ենք անգամ վերադարձնել մեր ուսանող ընկերին մեր պարքը, որ սրբութիւն պիտի լինէր բոլորիս համար, և թոյլ ենք տալիս, որ ապագայ մեր սերունդը քաղցած-ծարաւ հեռուոր մայրաքաղաքում օր անցնէ...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ Պ. Ս. Ց.-ԻՆ

—

Ապացուցանելու փոխարէն դուք ասում էք՝ «այո, այո», և հերքելու փոխարէն ասում էք՝ «ոչ, ոչ»։
Բեսոն.

II *)

Իմ զեկուցումը առիթ է տուել պ. Ս. Ց.-ին մի շարք սև խոսքեր անելու։

«Անաւասիկ մի ինտելիգենտ մարդ,—ասում է նա,—որ կարող էր նիւթին լրջութեամբ վերաբերվել, բայց որ հարկ համարեց միայն չափազանց վիճելի և չափազանց անձնական տպաւորութիւններ հաղորդել հայ մտաւորականութեան մասին»։ Թերևս հասարակութեան մի մասը նոյնիսկ ախորժանքով ունկնդրէ այդպիսի զեկուցումներ, «բայց լուրջ մտաւորականը չը պիտի ընդառաջ գնայ այդ ախորժանքին և մանաւանդ չը պիտի զարդեցնի նման քննութիւն»։ Գրական-Գեղարուեստական Ակումբում ամեն կարծիք կարող է յայտնվել, «միայն պէտք է որ այդ կարծիքները շատ թէ քիչ հիմնաւոր լինեն և մանաւանդ արտասանվեն նիւթին վայել լրջութեամբ»։ Դատախօսը «պարտաւոր էր աւելի լուրջ և աւելի ճշմարտապատում լինելու», որովհետև հիմա մի շրջան է, «երբ մենք պարտական ենք լրջութեամբ դուրս գալ բազմութեան առջև»։

Կարծ։ Ըստ պ. Ս. Ց.-ի զրոյցս «լուրջ» չի եղել։

Բայց պ. Ս. Ց.-ն պիտի իմանայ վերջապէս, որ ես իր հասկացած լրջութեան չեմ էլ ձգտել բնաւ։ Ոչ անցեալ տարի, երբ հայ լիզուի խնդրի մասին էի զեկուցում, ոչ էլ այս տարի, երբ քննութեանս առարկան ժամանակակից կովկասահայ ինտելիգենցիայի բնոյթագիրն էր։

Երբ ժամանակակից հասարակագիտական մի թեզ հիմնաւորում կամ հերքում են որևէ հերոսական արգումենտով, երբ այս կամ այն սոցիալական պրոբլեմը փորձում են լուծելու հայ պատմութեան մթութիւնից քաղած անտոյգ փաստերով, երբ հիմնաւոր, բայց տհաճելի, հայեացքների դիմաց հրապարակ են նետում պարադայնն ազգասիրութեան ժանգոտած զէնքերի ողորմուկ պաշարը, երբ որևէ հեղինակի մասին ցիտատներով և անուններով բնութագրված աշակերտական շարադրութիւններ են գրում ու կարդում, երբ որևէ բանախօսութեան մէջ կեղծ գիտական հիմունքներով սրբագործում են հայ մեշչանականութեան հայեացքներն ու սովորոյթները,—մեշչանականութեան դրօշակիրները համարում են այդ «լուրջ ու վայելուչ» վերաբերում դէպի գործը։

Իմ լրջութիւնը ուրիշ լրջութիւնից է։

Վայելչութիւնն ու լրջութիւնը, ըստ իս, իրի ներքին յատկութիւններն են և ոչ արտաքին։ Այն, ինչ որ գերմանացիք կոչում են innerer Ernst (ներքին լրջութիւն), կարող է երևան գալ մի թռուցիկ ակնարկի մէջ, մի սուբիեկտիվ դիտողութեան մէջ, մի մտազարթոյց հարցի մէջ, մի անաչառ զրոյցի մէջ, որը զուրկ է դիտութեան արտաքին սարքերից։ Դիտողութեան նրբութիւնն ու խորութիւնը, դիպուածականութեան բացակայութիւնը և ընդհանրացման հիմնաւորութիւնը, անկեղծութեան շեղը և շիտակութիւնը մտածողութեան մէջ այն մօմենտներն են, որոնք իսկական լրջութեան ընոյթն են տալիս մարդու դատողութեան։ Այդ լրջութիւնը բացառողը պարտաւոր է ցոյց տալու յիշատակած մօմենտների բացակայութիւնը։

Սակայն ոչ պ. Ս. Ց.-ն և ոչ էլ նրանք,

*) Տես «Մշակ» № 79.

որոնք բաժանում են Ս. Ց.-ի տեսակէտը, փորձն անգամ չարին հերքելու զեկուցումը մէջ բերածս թեզերը և ասացին միայն՝ միս մէջ բերածս թեզերը և ասացին միայն՝ «այո, այո» և «ոչ, ոչ»։ Նրանք հրապարակ եկած պաթոսը, խօսեցին ինչ-որ «երիտասարդութեան» զայրոյթի մասին, իմ կարծիքները յայտարարեցին «անպատասխանատու», բայց դիտողութիւններս հերքել չը կարողացան։ Դա ինձ համար մեծ գոհացում է և մի նոր ապացոյց, որ այս անգամ էլ— ինչպէս և անցեալ տարի—աշխատել եմ մատս դնելու հայ կեանքի վէրքերից մէկի վրայ։

«Լրջութեան» բացակայութիւնը, սակայն, ըստ պ. Ս. Ց.-ի, զրոյցիս միակ թերութիւնը չէ։

«Մեր հասարակութիւնը,—ասում է նա,—տարբեր շարունակ լսել է միայն բառերի խաղ և ունկնդրել միայն ֆրազաներ։ Հասարակական յուզումնալից շրջաններում թերևս այդպիսի խօսքերը, ճառերը, դասախօսութիւնները անխուսափելի են եղել։ Հիմա արդէն ուրիշ ժամանակներ են եկել և մենք ապրում ենք մի շրջանում, «երբ մենք կարող ենք և պարտական ենք բարձրացնել խօսքի արժէքը, երբ մենք պարտական ենք լրջութեամբ դուրս գալ բաղխութեան առջև»։

Աւելի քան օտարոտի է լսել այս արգումենտը պ. Ս. Ց.-ի բերանից։

Եթէ տողերս գրողը կատարել է որևէ շատ չնչին հասարակական գործ, այդ գործը եղել է բողոք մի շարք տարդիցիոնների դէմ, ի մէջի այլոց և այն սպեցիֆիկ հայկական տարդիցիոնների դէմ, որոնց ցանցի մէջ մուշ-մուշ քուն է եղել պ. Ս. Ց.-ի միտքը։ Այն անյուսանոտ զեկուցումն անգամ, որ ես այս տարի ներկայացրել եմ Գրական-Գեղարուեստական Ակումբին, ոչ այլ ինչ է, քան բողոք հայ մեշչանական ինտելիգենցիայի էութեան դէմ։ Մեղադրել ինձ անքննական տարդիցիոնիզմի մէջ, նշանակում է միամիտ փորձն անել արդարացի կերպով ինձանից լածը անտեղի կերպով ինձ դարձնելու։

Շունը, սակայն, այդտեղ չէ թաղված։ Պ. Ս. Ց.-ի համար հաճելի կը լինեն ոչ միայն «յուզումնալից տարիների» տարդիցիոնները, այլ և տարդիցիոնները անյոյզ հայկական միջնադարի, եթէ միայն ասածներս սաղ գայլի իր մտածողութեան, եթէ ես աշխատի գիտական արտաքինի տակ հայեացքներ արտայայտել, որոնցից մագաղաթի հոտ է գալիս։ «Գործի» զեկավարին զայրացնողը իմ տարդիցիոնը չէ, այլ իմ բիրտ վերաբերումը դէպի իր տարդիցիոնը։

Պ. Ս. Ց.-ն մեղադրում է ինձ և մի ուրիշ կէտի մէջ։

Իմ յիշատակութիւնը մի դատաստանական պրոցեսի, որը տեղի է ունեցել հեռաւոր հիւսիսում, նա համարում է անպատասխանատու և իմ կարծիքը այդ պրոցեսին մասնակցող ինտելիգենցիայի ֆիլիստրամիայի մասին՝ անբարեխիղճ։

Այդ մեղադրանքներին թող թոյլ տրվի հակադրելու հետևեալը։

Այս կամ այն պատասխանը բազմակողմանիօրէն լուսաբանելու նպատակով մեծ դատավարութիւնների հայթայթած մատերիալներից օգտվելը ամենից սովորական երևոյթն է թէ Ռուսաստանում և թէ Արևմտեան Եւրոպայում։ Այնպէս, ինչպէս ռուս պատմագիրը օգտվում է դեկտեմբերականների, նարոդնիկների, Չեռնիշևսկոյի և ուրիշների պրոցեսներից, ապագայի հայ պատմագիրն էլ պիտի օգտվի այն վիթխարի մատերիալից, որ կուտակվել է յիշատակած պրոցեսի ընթացքում։ Դա կը լինի, սակայն, ապագայում։

Իսկ այժմ մեղանից իւրաքանչիւրը, որն իրբև մեղադրեալ կամ պաշտպան՝ մասնակցեցել է հիւսիսային պրոցեսին, իրաւունք ունի իր կարծիքն ունենալու և արտայայտելու այդ դատավարութեան ամենից ակնբախ երևոյթների մասին։

Ինձանից առաջ, ուրիշ երկիրների մէջ և ուրիշ օրգաններում այդպիսի կարծիքներ յայտնվել են, և հայ մեշչանականութիւնը մեծ հիացումով կարդացել և իւրացրել է այդ կարծիքները։ Հիմա էլ հայ մեշչանականութեան պատասխանի իդէօլոգը չէր զրկի ինձ կարծիք յայտնելու իրաւունքից, եթէ միայն ասածներս հաճելի լինէին իր նպատակների համար։

Իսկ ասածներս ես պատրաստ եմ նորից կրկնելու, և պ. Ս. Ց.-ին ու բոլոր նրանց, որոնք իրանց վիրաւորված են զգում հայ ինտելիգենցիայի այն հատուածի իմ որակումից, մի ելք է միայն մնում։

Որևէ իրանց համար ընդունելի ձևով հասարակական պատասխանատուութեան հրաւիրել ինձ «անպատասխանատու և անբարեխիղճ» արտայայտութիւններիս համար։ Մինչ այդ ես ու հասարակութեան այն մասը, որ «ախորժանքով է ունկնդրել» ինձ, պիտի մնանք այն կարծիքի, որ պ. Ս. Ց.-ի համար է եղել ասված, որ արդէն օրհասական ընդ վախանել շնչոյն հզօրագոյնս կուլ։

Լ. Աթաբէկեան

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱԿԱԿԻ ԾԵՐԵԹԵԼԻՆ՝ ԲԱՆԱՍՏԵՂԾ Կ. Դ. ԲԱԼՄՕՆՏԻՆ

—

Վրաց վատակաւոր բանաստեղծ Ակակի Ծերեթելին, ապրիլի 13-ին, Կ. Դ. Բալմօնտի պատասխանը տրված բանկետին ասաց նրան.

«Երբ մեր նախորդները հրաւիրեցին ձեզ, ուսանողներդ, այն ժամանակ էլ մենք իրանց թոռներին թողին այս աւանդը՝ «չը մոռանալ հիւրասիրութիւնը, սիրել ուսանողներին, բարեկամանալ նրանց հետ և անբաժան գնալ մի ճանապարհով»։

Դրանից յետոյ մի դար անցաւ և այդ սուրբ աւանդը, չը նայած մեր կողմից եղած պատրաստակամութեան և ջանքերին, մինչև այժմ ի կատար չէ ածվում՝ մեր նկատմամբ։

Եւ այդ այն պատճառով, որովհետև զանազան կերպ ենք հասկանում նրա իմաստը։

Մի կողմը մտածում է, որ սիրոյ, եղբայրութեան և միութեան համար հարկաւոր է սիրտ, իսկ միւս կողմը մտածում է, որ—միայն խորտակումն...

Բայց այն ժողովրդի համար, որ մի քանի տասնեակ դարեր ապրել է ապա, կուլտուրական և անկախ կեանքով, զորձելու ուրիշ եղանակ չը գտնելը,—առաւել քան վիրաւորական է։

Սակայն չը յիշենք անցեալը։

Փառք Աստուծոյ, այժմ ծնվում են նոր մարդիկ, որոնք մեզ զարուն են խոստանում, որը կը բերի մեզ ոչ թէ կոկոններ, այլ ծաղիկներ։

Այդպիսի ներկայացուցիչներից մէկին մենք այսօր տեսնում ենք մեր մէջ, համակրելի մտաւորական և նշանաւոր բանաստեղծ Կ. Դ. Բալմօնտին։ Ողջունենք, պարոնայք, նրան, որպէս գարնան առաջին ծիծաղ, ողջունենք մեր սրտագին «մրաւալ ժամիւրով»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Բաղաքային վարչութեան՝ էլեքտրաքարշի վրա հակող յանձնաժողովը Անօնիմ ընկերութեան ենթարկել է 32,000 ր. տուգանքի այն պատճառով, որ նա վագոնների հարկ եղած թիւ չէ բաց թողել իր ժամանակին։

◆ Կովկասեան մելիօրատիվ համագումար կազմակերպող Թիֆլիսի բիւրօն ստացել է մի շարք ծանուցումներ այն մասին, որ համագումարի համար զեկուցումներ են պատրաստված մի քանի անձանց կողմից։ Արդէն խոստացված է 12 զեկուցում։

◆ Վաղը, ուրբաթ, ամսիս 18-ին, երեկոյեան ժամը 8-ին, Հայոց Ազգագրական Ընկերութեան մէջ Բ. Իշխանեան դասախօսելու է «Հասարակական իդէալները ժամանակակից Եւրոպայում» նիւթի մասին։

◆ Արտիստական Ընկ. ամարային շէնքում, մայիսի 3-ին, կազմակերպվում է մի զբօսանք յօգուտ Մանզիսի, Օդեսսումովի անուան ամարային գաղութի։ Այդ գաղութը շինված է Թիֆլիսի վեց իգական գիմնազիաների չքաւոր և թուլակազմ աշակերտուհիների համար։ Գաղութի վեց տարվայ գործունէութիւնը տուել է փառաւոր հետևանքներ. նիհար, հիւծված երեխաները երկու ամիս գաղութում մնալուց յետոյ վերականգնում են իրանց քայքայված առողջութիւնը։ Գաղութը բացի շէնքից՝ ունի և որոշ միջոցներ ապրուստի համար, որի բաղդը ամբողջապէս կախված է նուիրատուութիւններից։ Գաղութի կոմիտէը, որ միջոցներ է օրօնում գաղութը և նրանում այս ամառ աղքատ ու խեղճ երեխաներ պահելու համար, ներկայումս զբաղված է նուիրատուութիւններ (լինի այդ դրամով թէ իրերով) հաւաքելու գործով։ Նուիրատուները ընդունվում են կոմիտէի նախագահուհու, Կովկասի ուսումն. շրջանի հոգաբարձու Բուդոլֆի ամուսնու բնակարանում (Անաստասիեվսկայա փող. № 9)։

◆ Նահանգապետը «Կոչէկ» ընկ. թոյլատրել է հանդանակութիւն բանալ Թիֆլիսի ազգաբնակութեան մէջ, ընկերութեան մանկական ապաստարանի համար մի տուն գնելու։

◆ Կովկասի բուսականութիւնը հետազօտող յայտնի Եա. Ս. Մեդվեդեվը առաջիկայ ամառ հետազօտելու է Արարատ լեռան բուսականութիւնը։

◆ Բանաստեղծ Կ. Դ. Բալմօնտը ապրիլի 15-ի երեկոյեան մեկնեց Թիֆլիսից։

◆ Ապրիլի 15-ից բացվեցին շերամապահական կայարանին կից լինող սովորական մեղուաբուծական և շերամապահական դասընթացքները։ Առ այժմ գրվել են 110 հոգի։

◆ Ապա են քաղաքային թոշակները՝ մէկը Շամխարովի անուան—Պետերբուրգի պոլիտեխնիկումում, երկուսը՝ Թիֆլիս կանանց բարձր դասընթացքներում։ Ուրբաթ, ապրիլի 18-ին, քաղ. վարչութեան ուսումնարանական յանձնաժողովը այդ թոշակների համար թեկնածուներ է ընտրելու։

◆ Կիրակի, ապրիլի 20-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում, մի խումբ թատերասէրներ՝ դերասան-դերասանուհիների մասնակցութեամբ՝ ներկայացնելու են Բ. Այվազեանի՝ կեանքից վերցրած «Խնդագար» 3 գործ. դրաման։

◆ Քաղաքային առաջին ապաստարանում անցեալ մարտ ամսում գիշերել են 200 հոգի, որոնցից 2-ը կնայք են։ Նրանք ըստ ազգութիւնների բաժանվում են հետևեալ կերպով. ռուսներ՝ 59 տղամարդ, հայեր՝ 85 տղ. և 2 կին, վրացիներ՝ 40 տղ., լեհեր՝ 6 տղ., գերմանացիք՝ 4 տղ., թուրքեր՝ 2 տղ. և այլ ազգութիւններից՝ 2 տղամարդ։

—

ԿՈՍԿՈՍ

◆ Բաղուի «Մանկական հիւանդանոցի» ընկ. վարչութիւնը հիւանդանոցի հիմնադրութեան պատճառով փոխարքային ուղարկել է հետևեալ հեռագիրը. «Վերջերս կազմված «Մանկական հիւանդանոց» բարեգործական ընկ. վարչութիւնը դնելով Բաղուի ձրի մանկական հիւանդանոցի առաջին քարը, որ շինվում է քաղաքի յատկացրած հողի վրա, բաղդ ունեցաւ կենաց առաջարկելու Կովկասի ողջ ազգաբնակութեան կողմից սիրված նորին Կայսերական Մեծութեան փոխարքայ կոմսի և կոմսուհի Ելիզավետա Անդրէեվնայի, որ միշտ պահպան են կանգնել մեր թանգագին Կովկասին և ջերմ աջակցութիւն են ցոյց տուել երկրի ամեն կուլտուրական ձեռնարկութեան՝ յօգուտ մեր լայնածաւալ հայրենիքի բարօրութեան»։

◆ Ապրիլի 15-ին կայացել է Բաղուում նոր բացվող վաճառականական բանկի օծումը։ Բանկը գտնվում է Թադիեվի շէնքում։

◆ Բաղուի քաղաքապետը թոյլատրել է Ս. Ա. Իւզբաշեանին Բաղուում մի պատկերազարդ ամսագիր հրատարակելու հայերէն լեզուով, «Շաւիղ» անունով։

◆ Ամսիս 13-ին, Բաղուում օդաչու Եբուսեղ Նազարեան իր «Բլերիօ» օդանաւով աջող թռիչք է կատարել։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետական Դումայի անդամ Աշէմեանը «Пр. Край»-ի աշխատակցի հետ զրուցելիս հետևեալն է յայտնել Պետական Դումայի գործունէութեան մասին. «Շնորհիւ Դումայի, երկրի քաղաքական զարգացումը բաւական առաջ է գնացել։ Այդ խոստովանում են իշխանութիւնները։ Զորրորդ Դումայի վրա անկասկած յանցանք է ընկնում այն մաքով, որ սա ծառայում է իբրև հասարակ զեկուցագիր։ Հոկտեմբերականները պէտք է հրաժարվեն այնպիսի քաղաքականութիւնից, որ բղխում է կեղծ երկիւղից Դումայի վիճակի վերաբերութեամբ։ Անկարելի է ոչնչացնել Դուման։ Գաւառը զարթնում է։ Կուլտուրական տեսակէտից նա առաջ է գնում։ Հասարակութիւնը և ազգաբնակութիւնը հասունանում են։

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, նախագծված է հիմնել Պետերբուրգում քաղաքային ու զէմստվայնի գործի բարձր դպրոցական ճեմարան մի քանի մասնագիտական ֆակուլտէտներով։

◆ Պրոֆ. Մերեժկովսկին, լրագիրների ասելով, գուցէ տեղաւորեն հոգեկան հիւանդների հիւանդանոցում, ի նկատի ունենալով նրա գործ դրած սեռական այլանդակութիւնների անհաւանական դէպքերը։

◆ «Н. В.»-ն հաղորդում է, որ պետական բանկի կառավարիչ նշանակվում է Ի. Շիպովը։ Ա. Կոնշինը թողնում է իր պաշտօնը և պաշտօն է ստանձնում ռուս-ասիական բանկում իբրև խորհրդի նախագահ։

◆ Կառավարութեան մշակած նոր կանոններով լուրջ հսկողութիւն է սահմանվում մասնաւոր բանկային տների գործողութիւնների վրա, որպէս զի աւելի մեծ պատասխանատուութիւն օրոշվի բանկիրների համար իրանց կլիենտների դիմաց։

◆ Լուրերի համաձայն, ապրիլի 30-ից դադարելու է կիսապաշտօնական «Россія» թերթը, որովհետև կառավարական շրջաններում նրա գոյութիւնը աւելորդ է համարվում։

◆ Մոսկվայում հոկտեմբերականների կենտրոնական կոմիտեում Ա. Գուչկովը զեկուցում կարդաց ժամանակակից քաղաքական դրութեան մասին։ Զեկուցումը կրում է յուռութս ընաւորութիւն։ Գուչկովի կարծիքով կառավարութիւնը սխալվում է, երբ ձգտում է միութիւն կապել ըէակցիոն տարրերի հետ։ Այդ ուղին կարող է կատաստրոֆա առաջ բերել երկրում։ Սեռում է ներքին դժգոհութիւնը և կուտակվում են մութ ամպեր։ «Ներքին ու արտաքին բարդութիւնները չեն խափանվի,—ասում է Գուչկովը,—եթէ կառավարութիւնը օր առաջ չիրագործէ հոկտ. 17-ի մանիֆեստը»։

◆ Մոսկվայից մեզ գրումեն հետևեալը. «Մարտի 23-ին Մոսկվայի հայոց եկեղեցում կայացաւ ծիսական ընդհանուր ժողով զբաղվելու աւագ քահանայի և սարկաւագի ընտրութեան հարցով։ Ընդհանուր ժողովը ընտրեց մի յանձնաժողով կազմված 16 հոգուց, որոնց մէջ է եկեղ. խորհուրդը իր ամբողջ կազմով և եկեղեցու երէցփոխը։ Յանձնաժողովին յայտարարված է կազմել արժանաւոր թեկնածուների ցանկ և առաջիկայ օգոստոսի վերջերին ներկայացնել ծիսական երրորդ ընդհանուր ժողովին, և ընդհանուր ժողովը ձայների մեծամասնութեամբ կընտրի իր արժանաւոր քահանան և սարկաւագը եղած թեկնածուներից։ Թէ որքան մեծ է Մոսկվայի նման մի կենտրոնում քահանայի դերը, որը կոչված է իսկական հովիւ լինելու հայրենիքից հեռու, օտարացման վտանգին ենթակայ, բայց և մի կենսունակ գաղութում, որի մէջ կայ առատութիւն դրդելու և գործել կարելի է, այդ մասին դժուար է մեզ այս հակիրճ տողերում մանրամասն գրել։ սակայն ի նկատի ունենալով այդ բարձր կոչումը և նշանակութիւնը, յանձնաժողովը պարտաւոր է խիստ զգուշութեամբ մօտենալ հարցին և կատարել իսկական ընտրութիւն, հիմնված բազմակողմանի քննութեան վրա։ ցանկացողներն էլ, հոգևորական թէ աշխարհական, որոնք կը կամենան դնել իրանց թեկնածութիւնը, թող հեշտացնեն յանձնաժողովի գործը և ի նկատ առնելով ժամանակի սղութիւնը՝ թող օր առաջ ներկայացնեն իրանց խնդիրները, կցելով ցուցակ ծառայութեանը, մանրամասն կենսագրականներով և այլ հարկաւոր նիւթերով»։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

◆ «Սախալիս Դազէթի» լրագրի ասելով, Բօրչալուի գաւառում գտնվող վրացի գիւղացիները գաղթում են Յունաստան՝ պատճառաբանելով այն բանով, որ վրացի կալուածատէրերը նեղ դրութեան մէջ են դնում նրանց և անհնար դարձնում այնտեղ ապրելը։

◆ Այս տարվայ հոկտ. 13-ին 50 տարին լրանում այն օրից, երբ Թիֆլիսի և Քութայիսի նահանգների, այլ և Մինգրելիայի, Սվանէթի, Սամուրզաղանոյի ու Սուխումի շրջանների վրացի գիւղացիութիւնը ազատվց ճորատատիրական դրութիւնից։ Սրևէ բանով այդ տարին նշանաւոր դարձնելու նպատակով Ս. Աւալիանին «Սախ. Դաղէթիում» հրատարակած իր մի յօդուածում առաջարկում է տպագրել հանրամատչելի բրօշիւրներ, նուիրված ճորատատիրական դրութիւնից ազատվելու պատմութեան և նրա օգնեցած նշանակութեան։ Դիքոյկները պէտք է բաժանվեն գիւղացիութեան մէջ, որպէսզի սա կարողանայ նրանց միջոցով գաղափար կազմել իր անցեալի մասին այդ 50 տարվայ ընթացքում։

◆ Դեռ անցեալ տարի վրաց մամուլում արծարծվց վրացի բժիշկների, ապա և ուսուցիչների միութիւններ կազմակերպելու հարցը։ Այժմս նորից բարձրացվել է այդ վարիոր հարցը և անհրաժեշտ է համարվում կազմակերպել եթէ ոչ բժշկական, գոնէ ուսուցչական միութիւն, որպէս աւելի անապահով դրութեան մէջ գտնվող դասակարգի, որի համար աւելի զգալի է այդ պահանջը։

ԹԻՏՈՒՐ., ԳԻՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Արտիստական Թատրոն

Ապրիլի 15-ին Բարատովի խումբը ժուրնալիստների երեկոյի առիթով նոր կայացրեց Իւշկեվիչի «Комедія брака» 4 գործ. կոմէդիան։

Այս պիէսի մասին իր ժամանակին գրվել է նաև «Մշակում»։ Խաղի նկատմամբ շատ բան չունենք ասելու. բաւական է ի նկատի ունենալ ներկայ ռուսդրամատիկական խմբի անսամբլը։ Այդ գիշեր մանաւանդ գլխաւոր դերերում հանդէս էին եկել տ. Աստրովան (Օլիա) և պ. Բորիսովը (Գուլման)։ Մանաւորապէս Բորիսովի արժանի է նկատողութեան այն շարժի համար, որ նա երբեմն մացնում էր իր տաղանդաւոր խաղի մէջ։

Ներկայացումից յետոյ եղաւ դիվերտիսմենտ, որ, սակայն, միանգամայն հակառակ երևաց ծրագրում տպվածին, որի համաձայն հանդէս էին գալու հասարակութեան սիրելի ծիխարեվան, Աստրովան և այլք։ Մինչդեռ Բարատովի երկու ոտանաւոր արտասանելուց յետոյ կրկին երևաց Բորիսովը և... լուրջ թատրոնին, լուրջ հասարակութեան և վերջապէս լուրջ արտիստի կոչման ներհակ, զեկլամացիա արեց՝ թէ ինչպէս է հրէան խօսում հեռախօսով Օդեսսայում...

Այսօր կը ներկայացվի «Темное пятно» և «Женская чепуха».

Վաղը նշանակված է խմբի անտրէպրէնեօր Բարատովի բենեֆիսը, որի ափիթով կը տրվի Լ. Անդրէեվի «Անֆիսան»։ Ե.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Նաւասարդ», գրական և գեղարուեստական տարեգիրք, Ա., կազմեցին Գ. Վարուժան և Ց. Սիրունի, 1914 թ. Գ. Գօլիս։

II

«Նաւասարդի» երկրորդ մասը գրագատական է կոչվում, որը իրապէս բուն գրական-քննադատական համարել չենք կարող։ Այս բաժնում հանդէս եկողները գրեթէ վերլուծողական ոչինչ չեն տալիս։ Այնուամենայնիւ ուշադրաւ պիտի համարենք զետեղված յօդուածներից մի երկուսը։

Այս մասում Ց. Սիրունին հանդէս է եկել իր մի յօդուածով, որ կրում է «Դէպի աղբիւրը լոյսին» մեծադղորդ վերնագիրը։ Սա «գրադատական» ոչինչ չունի իր մէջ. սա մի ներքող է այն «հեթանոսութեան», որի մէջ «Հայկեան հանճարն» ու «Արտաշիսեան նախնիքներու» հուրն ու սուրն են օրհնում «Նաւասարդի» հեթանոսները։ XX դարի հայ հեթանոսների հետ Սիրունին ևս կանգնած է «արուեստը արուեստին համար» տեսակէտի վրա՝ ատուածացնելով բանաստեղծին և արհամարհելով «ամբոխը»։ «Անփոյթ ու անտարբեր, բանաստեղծը հովին պիտի տայ իր երգերը», պիտի հրձվի բնութեան հրաշալիքներով, որովհետև ինչ նրա գործն է, թէ ինչ է կատարվում դուրսը, աշխարհում. միթէ բանաստեղծի համար կայ աւելի մեծ հաճոյք, քան զբաղվելը սոսկ «իր սեփական յուզումներով ու կիրքերով»։ Բանաստեղծը, ըստ հայ «հեթանոսների», այսպէս ասած՝ հայ մոդեռնիստների, «իր հերարձակ վազքին մէջ երբէք մատնոգութիւնը չունի հանելի ըլլալու ամբոխին, և իր քնարն ու վրձինը չեն թըրթռար անոր կիրքերուն ու ճաշակներուն համար, որովհետև գիտէ թէ անոնք, ընդհանրապէս, կուզան գեղեցկութիւնն ու արուեստը քանդելու համար»։ Որպիսի՜ կեղծիք և որպիսի պրոֆանացիա արուեստի։ Եթէ բանաստեղծը միմիայն իրան համար է գրում, եթէ նա ամբոխը արհամարհում է, ապա ինչու իր գրուածքները հովին ու քամուն չէ տալիս, այլ բազմաթիւ օրենսնեներով ապագրում ու տարածում է այդ «վանդալ» ամբոխի մէջ։ Արուեստը՝ կամ ստեղծագործութիւնը անկախ է ամբոխից, թէ նրանից է ծնված ու ծնվում։ Սրա մասին երկու կարծիք լինել չէ կարող արուեստի էութիւնը ըմբռնողի համար։ «Ժողովուրդը մշտաբուղխ աղբիւրն է բանաստեղծութեան», ասել է Հերդէրը. այդ գիտեն «Նաւասարդի» հայերը։ Ուրեմն արուեստի աղբիւրը այն «ամբոխն» է, որին հայ մոդեռնիստները, հայ հեթանոսները վանդալ են համարում... Հայ հեթանոսները չեն մտածել մի վայրկեան, որ իրանց սահմանափակ, անհատական ոյժերով «նոր արշալոյս» կերտելու խոստումը և իրանք-իրանց «Հայկեան հանճարի» «օգոստափառ զաւակները» համարելը արդիւնք է ուղղակի հիւանդ մեծամտութեան։

Ց. Սիրունեի կարծիքով, բանաստեղծը ամպերի մէջ, աստուածների բնավայրն մօտիկ է սաւառնում, իսկ ամբոխը մի թշուառ, գորշ զանգուած է, որ երբէք «չի կրնար իր ակնարկն իսկ հանել հոն»՝ արուեստագէտի բարձր սլացքներին, ու երբեմն է տալիս «այն սակաւաթիւներուն, որոնք իրենց հոգին հաղորդակից կը զգան այդ բարձրութեան»... Եւ այս առողները այն «արուեստագէտներն» են, որոնց բանաստեղծական մօտիվները «տարփանքից», «մերկութիւնից», կնոջ մարմնի հրապոյրից այն կողմը չեն անցնում։ «Ամբոխին» հակադրվողները, ամբոխն ոչնչացնողներն այն «արուեստագէտներն» են, որոնք այսօր ընդունակ չեն մի վայրկեան թափանցելու նրա հոգեկան աշխարհը, խորանալու նրա սրտի խորունկ ծալքերը, խոյանալու նրա ձգտումների ու տենչերի սաւառնումների սահմանները, տեսնելու համար թէ որչափ բարդ է այդ «ամբոխի» հոգին, որչափ բազմապիսի են նրա «մօտիվները»։

Եթէ Սիրունին ներքող է կարդում հայ հեթանոսներին, սրան յաջորդող Ց. Դաղանհանը՝ պաշտպան է հանդիսանում նրանց։

Դ. Վարուժանը, հայ առաջին հեթանոսն ու մոդեռնիստը, անցեալ տարի հրատարակել էր իր «Հեթանոս երգերը», որոնց առ-

ռանցքը «կնոջ մխն էր» և «առիվնները հեշտին»։ Մենք քննադատել էինք այդ երգերը և ընդգծել նրանց մակերեսայնութիւնն ու բնոյթը։

Այժմ Գալանճեանը, խօսելով անցողակի միջնադարեան տաղերգուների մասին և յիշելով Ղազար Սեբաստացու մի բանաստեղծութիւնը, առանձնապէս ընդգծում է, թէ ինչպէս մինչին դարերում կնոջ «մասնին բոլոր պաշտելի շնորհները» երգող բանաստեղծները երբէք բարոյականի նեղ ըմբռնումներով կաշկանդված չեն եղել, մինչդեռ մեր ժամանակներում Դ. Վարուժանի «Հեթանոս երգերը» «գայթակղութիւն» են պատճառել «ռուսահայ գրական եղբայրակիցներին ոմանց»։ Այստեղ անպայման թիւրիմացութիւն կայ։ Եւ թիւրիմացութիւնը ծագում է նրանից, որ հեթանոս երգերի հեղինակն ու պաշտպանները բանաստեղծում ու երգում են այնպէս, ինչպէս մինչին դարերի բանաստեղծը, իսկ մենք պահանջում ենք նրանից երգել այնպէս, ինչպէս պահանջում է մեր ժամանակակից իրականութիւնը։ Եթէ Ղազար Սեբաստացու ժամանակ շնորհալի բանաստեղծները կանացի մարմնի հրապոյրն էին միայն տեսնում, այժմ կեանքն ու դարերը փոխվել են, մարդկային հոգին խորացել է, ուստի և մեր ժամանակի շնորհալի բանաստեղծը պարտական է թափանցել նաև կնոջ հոգու խորքը։ Կնոջ մէջ չը պէտք է նայել միայն մարմին և միս տեսնել, այլ և սիրտ ու հոգի։ Սեբաստացի Ղազարի ժամանակ կնոջ «ծով» աչքերն ու «կամար» յօնքերն էին միայն տեսնում, «խնկալի տուփ» բերանը, «մարգարիտ» ակռաները, «շարբաթ» շրթունքը, «վարդով լի բաղչա» ծոցը, վերջապէս, «շամամ» ծիծերը։ բայց մեր ժամանակներում կինը արևելեան մեղկութեան ու տափանքի օբիեկտ չէ միայն։ Ժամանակակից բանաստեղծը չէ կարող կնոջ մէջ «միայն ձեռն ու ծաղերը» տեսնել, չէ կարող նրա «սև պորտով կնքված որովայնը» կամ «թխագեղ պտուկներով ծիծերուն կոյտերը» երգելով անցնել-գնալ, առանց խորանալու նրա հոգու և սրտի մէջ։ Վարուժանի երգած հեթանոսական սէրը գռեհիկ է, կոպիտ է, ուստի և ժամանակակից կնոջ համար վիրաւորական է, որովհետև միանգամայն անտես է առնված ժամանակակից կնոջ ներքինը, որտեղ տենչերի ու յոյզերի մի ամբողջ հնոց կայ, և այդ հնոցը վրիպել է բանաստեղծի աչքից...

Ահա ինչպիսի լուրջ և ծանր պահանջներ ենք ունեցել մենք Վարուժանից, որի բանաստեղծական շնորհքը ընդգծել ենք առանձնապէս։ «Բարոյական նեղ ըմբռնումները» մեզ համար վաղուց անցել են աւանդութեան գիրկը։ Մեր պահանջը ժամանակակից բանաստեղծից սա է. առաջին՝ ապրել կեանքի ժիսրում և ոչ եթերում. երկրորդ՝ լինել հոգեբան և ոչ մասբան...

Վերոյիշեալ երկու յօդուածներից յետոյ որոշ հետաքրքրութիւն է շարժում Վ. Գուլյումճեանի ժողովրդական բանահիւսութեան՝ Անտունիներին վերաբերեալ յօդուածը, այլ և հայ հեթանոսների համար միանգամայն ուսանելի՝ Էմերսօնից թարգմանված «Ասրուեսը» վերնագրով կարճ յօդուածը։ Այդ Ասրուեսը յետոյ մի ցիւ յօդուածից ես կուզենայի այստեղ մի ցիտատ բերել և նրա վրա առանձնապէս հրատիրել հեթանոսների ուշադրութիւնը. «Անոնք (իմա արուեստագէտները) կանարգեն մարդերը իբր անճաշակներ, բթացածներ և անփոփոխելիներ և ինքզինքնին կը մխիթարեն ներկի տոպրակներով և մարմարի կտորներով։ Անոնք կը մերժեն կեանքը իբր տափակութիւն մը և կը ստեղծեն մեռելութիւն մը՝ զոր բանաստեղծութիւն կը կոչեն։ Անոնք մէկ կողմ կը նետեն օրուան մանր գործերը և կը թռչին դէպի հեշտալի երազներ։ Անոնք կուտեն և կարբենան, որպէսզի յետոյ իրագործեն իդէալը։ Արուեստը այսպէս կը զրպարտուի...»։

Հայ հեթանոսներին կը մնայ խոնարհել իրանց գլուխը՝ մտածելու, խորհելու համար կեանքի վրա և իրանց տաղանդի ոյժով աշխատել թափանցելու ժամանակից իրականութեան ժիսրը և մարդու ներսը։

Նոյն բաժնի յետագայ յօդուածների մէջ թռուցիկ ակնարկ ենք գտնում 1913 թուի հայ գրական-թատրօնական երաժշտական կեանքի մասին թէ Կովկասում և թէ Թիւրքիայում։

Ժողովածուի երրորդ բաժնում («Գեղարուեստ») զետեղված է դերասան Սեւումեանի ներկայացրած վեկուցումը Հայոց Դրամատիկական Ընկերութեանը՝ հայ թատրօնի վերածնութեան վերաբերեալ։ Զեկուցումն լեզուն թիւրքահայ բարբառի է վերածված։ Հր. Ալեանք նկարիչը դիտեղել է իր երկու յօդուածները, մէկը «Ժրանսական նկարչութիւնը և ներկայ ձգտումը» և միւսը՝ «Պոյտ մը Շանզ-Էլիզէ երկու սալօնը՝ ներսն մէջ»։ Առաջինը հետաքրքրական և շահեկան կը լինէր, եթէ յօդուածագիրը աւելի լայն շրջանակի մէջ դնէր այն և աշխատէր գտնել Ֆրանսիական ներկայ նկարչութեան մէջ գերակշռող ուղղութեան կամ գպրոցի գոյութեան պատճառները։

Նոյն բաժնում կայ և մի յօդուած հայկական դրամների մասին. գրել է գօկտ. Հ. Ց. Ասատուրեան։

«Նաւասարդի» վերջում զետեղված է երաժշտագէտ Կոմիտասս վ.-ի մի ուսումնասիրութիւնը Լօռու գութաներգին վերաբերեալ։ Կոմիտասը մանրամասնօրէն վերլուծում է աշխատանքի այդ երգը։ Նկատելի է միանգամայն, որ երաժշտագէտը թափանցել է ժողովրդական երգի էութեան մէջ և մի օր ընդունակ պիտի լինի տալու մի մնայուն և գնահատելի գործ։ Իր այդ ինքնուրոյն դժուարին, բայց սիրած գործում խրախուսանքի և կատարեալ քաջալերութեան արժանի է այդ մարդը։ Ուսումնասիրութեանը կցված է եւրոպական նոտաներով գրի առած և դաշնակած «Լօռու գութաներգը»։

Աւարտելով մեր գրախօսականը, անհրաժեշտ ենք համարում յիշատակել այն ևս, որ «Նաւասարդը» բաւական թւով գեղարուեստական պատկերներ ունի իր մէջ, տպագրութիւնը կատարված է շքեղ և նայած ծաւալին (340 երես)՝ գինը—1 ր. 50 կ.— միանգամայն էժան է։ Սուրբաթեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԵՂԵՌՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Նիւ-Եորկից մարտի 25-ից գրում են կ. Պոլսի «Բիւզանդիոն» թերթին հետևեալ սոսկալի ոճրագործութեան մասին։

Մարտ 3-ի թղթակցութեամբ յիշած էի թէ գոհարավաճառ տիար Յովհ. Շամլեան անյայտացած ըլլալով, կը կարծուի թէ ոճիրի մը զոհ եղած է։ Այս օրերս ամերիկեան թերթերու մէջ գրուածին նայելով տիար Յովհ. Շամլեան փետր. 9-ին երկուշաբթի առաւօտ ըստ իր սովորութեան Մէթէքքն իր ընակարանէն ելած ու Լօրէնս գացած էր ապրանքները ծախելու և ամբողջ օրը հայ կեդրոններու մէջ տեսնուած էր ուրախ-զուարթ, մինչև երեկոյեան ժամը 9-ը, և անկէ հաքը այլևս տեսնուած չէր։ Նոյն երեկոյտուն չվերադառնալը կամ տելէֆօն չընելը՝ իր պարագաներուն կասկած առթած էր թէ մի գուցէ ոճրի մը զոհ եղած ըլլայ։ Ամիս մը ամբողջ գաղտնի ոստիկանութիւնը հետաքննութիւններ կատարեց, սակայն չկրցաւ հետք մը գտնել անորոշ կամ մեռած ըլլալուն մասին, և խնդիրն առեղծուած մը մնաց մինչև մարտ 11, երբ այն օրը՝ ոճրէն տեղեակ եղող հայ մը, Թուխման Զաքոյեան, իր գիտցածները խոստովանելով, յայտնուած է թէ փետր. 9-ին երկուշաբթի երեկոյ երեք դաշնակցական ընկերոջի երիտասարդներ—Պետրոս Դեզարեան, Կարապետ Պէրպէրեան և Յովհաննէս Աւետեան անուններով—դաւով մը Շամլեանը «դաշնակցականներու կլիւբը» տանելով՝ հոն վայրագօրէն կացինի հարուածներով ըստպաննելով՝ գոհարեղէնները կը յափշտակեն, խեղճ զոհին անկենդան դիակը շէնքին մէջ տեղ մը կը պահեն, սակայն կլիւբին սրճարար յիշեալ Թուխման Զաքոյեան իր պահանջէ որ դիակը վերցնեն անկէ, ինքը չի կրնար անոր ներկայութեանը հանդիստ մնալ։ Ոճրագործները զայն յօդուտելով մօտակայ դեզը նետել կուզեն, բայց յետոյ առաւօտէն եկող ձիւներու տակ կը թաղեն։ Ոստիկանութիւնը դժբաղդ զոհին մարմինը ըստուած տեղէն գտնելով Լօրէնս կը բերէ, իսկ յիշեալ երեք ոճրագործները ձերբակալելով կը հարցաքնէ, որմնք կատարելապէս կը խոստովանին թէ իրենք սպանած են Շամլեանը։ Շամլեան պարկեշտ ու բարեհամբաւ անձնաւորութիւն մը ըլլալով, մեծ բազմութիւն մը ներկայ եղած է յուղարկաւորութեան։

Պոլսի կ. «Ազատամարտ» թերթը յայտնած լինելով, թէ ոճրագործները ամենքը դաշնակցականներ չեն, այլ մէկն է դաշնակցական, երկրորդը՝ հնչակեան և երրորդը՝ սահմ.-ռամկավար,—այս առարկութիւնը առիթ է տուել թիւրքահայ երկու յայտնի երգիծաբան՝ Եր. Օտեանին և Եր. Թօլայեանին («Կավռոշի» խմբագիր) երգիծաբանական յօդուածներ գրելու, որոնցից մէնը (Ե. Թ.) այսօր առաջ ենք բերում։

Իմ դաշնակցական բարեկամներս առաջինն են խոստովանող, որ ես «Ազատամարտի» Ջերմեռանդ ընթացող մը եմ... ուէ Գր. Անդութի մը և Ենովք Շահէնի մը նման։

Արդ, գիտէք թէ երէկի «Ազատամարտ» ինչպէս... արտայայտուած էր Ամերիկայի մէջ չորս դաշնակցականներու՝ դաշնակցական կլիւբին մէջ գործած զազրելի ոճիրին մասին։

«Ազատամարտ» բարի եղած է չհերքելու Լօրէնսի ոճիրը և խոստովաներ է նոյն ոճիրին դաշնակցական կլիւբին մէջ գործուած ըլլալը, (դա՝ ոչինչ) զոր կայպանէ... (աս ալ բան մըն է)։

Մինչև հոս՝ աղէկ, և... շերիաթէի թերթ մըն ալ ասկէ առաջեր բան չպիտի ընէր։

Բայց կարելի է որ «Ազատամարտ» իր դոյնը երևան չհանէ... կամ իր պէտը չը ցուցնէ։

Ըստ Համալ-Բաշիի օգանին, Լօրէնսի ոճիրին հեղինակները «երեք» են եղեր և սխալ է եղեր բոլոր ոճրագործներուն դաշնակցական ըլլալը։ «Ազատամարտ» հետևեալ կերպով կը ստորաբաժնէ ոճրագործներուն պատասխանատուութիւնը.

ա. Ոճրագործը դաշնակցական է եղեր.

բ. Ոճրագործը՝ Վերակազմեալ-Հնչակեան,

գ. Ոճրագործը՝ սահմ.-ռամկավար։

Տեսա՞ք մի... միջկուսակցական համերաշխութիւնը։

«Ազատամարտ» չէ ուզեր այս ոճրին ամբողջ պատասխանատուութիւնը դաշնակցականներու վրայ բեռցնել, և երեք կուսակցութեանց միջև կը բաժնէ ոճիրին ամօթը, որ չէ մի հիմա... միջկուսակցական համերաշխութիւն կայ։

Չեմ գիտեր թէ այս կէտն ալ ճշդուած էր արդեօք... միջկուսակցական համերաշխութեան մէջ։

Ըսել է թէ ասկէ ետքը, երբ քանի մը դաշնակցականներ դատապարտելի արարք մը գործեն, պատասխանատուութիւնը պիտի բաժնուի հայ կուսակցութեանց միջև, ըստ միջկուսակցական համերաշխութեան օրէնքին։

Գէշ հաշիւ չէ. բայց նայինք անդիի կուսակցութիւնները պիտի ընդունին այս... համերաշխութիւնը։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Զարշարանքի շաբաթում Կրոնքվիլիսէյում մահմեդականներն առաջ բերին յունական Ջարդ, որի ժամանակ կանայք բռնաբարվում էին։

✦ Այս օրերս Պետերբուրգ է գալու Էնվէր-փաշան՝ Ռուսաստանի հետ հաստատուն համաձայնութեան մասին բանակցելու համար։

✦ Երևանից հեռագրում են, որ Թիւրքիայից ստացված տեղեկութիւնների համաձայն, գարնանը այնտեղ սպասվում է քիւրդական ընդհանուր ապստամբութիւն։

✦ Պարսից և ռուսաց կառավարութիւնների միջև բանակցութիւններ են վարվում Ուրմիայի լճում նաւագնացութիւն հաստատելու և Մուղանի պարսկական մասը ոռոգելու մասին։

✦ Վիէննայից հեռագրում են, որ Ֆրանց-Յովսէփ կայսրի մահը անխուսափելի է։

✦ Պարիզի ճանապարհին լուրջ արկարացել է դ'Անունցիօն։

✦ Մէկսիկայում տեղի են ունենում հականգլիական ցոյցեր։ Մէկսիկայցիք գնդակահարում են անխնայ ամերիկացիներին և ձեռքն ընկածներին պահում են իբրև պատանդ։

✦ Թիւրք-յունական յարաբերութիւնները սատնում են շատ լուրջ ընաւորութիւն այն հալածանքների պատճառով, որոնց մշտապէս ենթակայ է յոյն ազգաբնակութիւնը Թրակիայում։

✦ Անգլիական թագաւորը Ֆրանսիական մինիստրներ-նախագահ Դուամերգին շնորհեց Վիկտորիայի շքանշանի մեծ աստղ, որ համազօր է սրբ տիտղոսին։

✦ Բուդապէշտի «Az. Est.» լրագիրը հաղորդում է, որ ունգարական անկախների կուսակցութեան պարագլուխ կոմս Կարոլիի մեկնում է Պետերբուրգ իր քրոջն այցելելու համար։ Մինչդեռ հեռագիրներից յայտնի դարձաւ, որ յիշեալ այցելութիւնը ձեռնարկվել է քաղաքական նկատումներով։

✦ Անգլիական Գէորգ թագաւորը Պարիզում գտնված միջոցին, քաղաքի աղքատների օգտին նուիրեց 10,000 ֆրանկ։

✦ Գրէյի և Դուամերգի միջև լիակատար համաձայնութիւն է կայացել այն քաղաքականութեան մասին, որ վարելու են Անգլիան և Ֆրանսիան Պարսկաստանում և Տիբէտում։

✦ Մէկսիկայից հեռագրում են, որ իբր Խուէրտան անգլիական ներկայացուցչի միջոցով հաշտութեան առաջարկ է արել Միացեալ Պետութիւններին։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Գլխի կաշին մաքուր պահելը

ներկայանում է որպէս առաջին պահանջ առողջ և գեղեցիկ մազեր ունենալու համար։ Եւ դրա համար էլ իւրաքանչիւր ոք, ով գնահատում է իր մազերը, պէտք է սովորէ իր գլուխը կանոնաւոր կերպով լուանալ Պիկսաֆօնով։ Պիկսաֆօնը ներկայանում է քնքոյշ և հեղուկ ձիւթային սապոն գլխի համար։ Նա, առանձին պատենտային միջոցով, մաքրված է ձիւթին յատուկ վատ հոտից։ Պիկսաֆօնը ոչ միայն մաքրում է գլխի կաշին, այլ և, շնորհիւ ձիւթի պարունակութեան, բարենպաստ ազդեցութիւն է ունենում մազերի վրա։ Պիկսաֆօնով մազերի կանոնաւոր լուացումը ներկայանում է իսկական ամենալաւ միջոց գլխի կաշին և մազերը ամրացնելու, համաձայն նորագոյն հայտնագործութեան։

Մէկ սրուակը, որ բաւականանում է մի քանի ամիս, արժէ 1 ր. 50 կ։ Բոլոր յայտնի վարսավիրանոցներում մազերի լուացումը կատարվում է Պիկսաֆօնով։

(Մ. 124239)

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՓՈԽԱԴՐՎԵԾ նոր բնակարան Սօլոլակում, Բէբուտովսկայա փող. № 38.

Ներքին և երեխաների հիւանդ., մասնաւոր ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեքտրոտերապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։

Տելէֆոն № 388.

(ա. օ.) 112. 100—46

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնաւոր սիֆիլիս, (ցեռարկումն ՑՕՑ եւ ՑԱՀ-ով) միզասեռական, վեներական եւ օրուի հիւանդութիւններ։ Էլեքտրաբուժութիւն։

Ընդունե- ($12^1/_2$—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.։

Սօլոլակ, Բէբուտովսկայա, № 33 (անկիւն Պուկէվիչա փող.), տելէֆոն 11—75.

(չ. 4) 785. 100 - 64

Փակաւա-Մեխանիկակ.

ԱՐՀԵՍՏԱՆՈՑ ԶԱՅՐՎՈՂ ԴՐԱՄԻ ԱՄԱՐԿՆԵ

ՎԵՐՆԵՐ ՊՈՓԵՅԼ

Վ.օկզալնայա փ. № 3.

(օ.մ.) 100. 100—26

Լոյս տեսաւ

«ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ»

պարզ և հասկանալի լեզուով ամեն մարդու համար։ Անհրաժեշտ է մանաւանդ գաւառացիներին, որպէս զի կայ բժիշկ և դեղատուն։ Մեծ տեսակ պատահական փորձառներ և նրանց օգնելը ամենահեշտ միջոցներով։ Դեղաբանով և բացատրութիւններով։ Գինը 30 կ.։ Ծախվում է նաև—«Վեներական ախտերի եւ ծաղուկ ցաւերի բժշկարան», նկարներով, բազմաթիւ բէցէպտներով և խորհուրդներով։ Գինը 50 կ.։ «Տիզ ծաղի տկնոց», անեկդոտներ։ Գինը 20 կ.։ «Ինչպէս մասի շալվարը», զօրվիլ։ Գինը 20 կ.։ «Բաֆֆիի» կենսագր. պատկերով։ Գինը 10 կ.։ «Մինոյն դաւադում» պատմուածք։ Գինը 7 կ.։ Դիմել Թիֆլիս, գրավաճառներին, և ինձ՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медиц. фельдшеру А. Г. ԵՍԱՅԻՑ. Գրքերի գինը և ճանապարհի ծախսի համար 17 կ. մարկներով առաջուց ուղարկել։

(հ. կ.) 327. 100—2

„Մշակի“ խմբագրատանը վաճառվում են

ՀԵՏԵՏԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իսահակի, թարգ. Լ. Բաբայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ.- էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ռ-ի 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . . . . 60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի . . . . . 50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Աւ. Առաքելեանի . . . 50 կ.
6) Մազդա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի . . . . . 40 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%։

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ“, Тифлисъ.

(4) 10—6

„Գիր“ գրախանութում վաճառվում է

Լինչ. «Հայաստան» (պատկերազարդ) Ա. հատ. . . . . 2 ր. 50 կ.
Ֆէրշալ. «Հաւատաքննական գաղտնիքները» (պատկերազարդ). . . . 2 ր. 50 կ.
Բրէշկովսկի. «Շրախնէլի տակ և ուրիշ պատմուածքներ». . . . 1 ր.
Շիպանեան. «Մատնիչը». . . . . 35 կ.
Թրամար. «Ուղեցոյց ընտանեկան երջանկութեան». . . . 1 ր.
Ակնունի. «Մեծ իդէալիստը» (Պրէսսանսէ). . . . . 10 կ.
Եսայեան. «Փորձանքների առաջեն բժշկարան» . . . . . 30 կ.
Յովհաննիսեան. «Բանաստեղծութիւններ». . . . . 1 ր. 50 կ.
» » . . . . . 15 կ.
Թումանեան. » . . . . . 1 ր.
Վահան Տէրեան. » . . . . . 1 ր.
Իսահակեան. » . . . . . 1 ր.
Մանուէլեան. » . . . . . I և II. 90 կ.
Ցակոբեան. » . . . . . 50 կ.
Դէմիրճեան. » . . . . . 50 կ.
Աթաբէկեան. » . . . . . 50 կ.
Տիգրանեան. » . . . . . 50 կ.
Ադա-Նեգրի. » . . . . . 50 կ.
Կուրդիեան. «Արշալոյսի զողանջները (Բանաստեղծութիւններ) I պր. 30 կ.
Քաջազնունի. «Հայ բանաստեղծները» (Արևելեան բարբառ). . . 65 կ.
Վարդանեան. «Լուսաբացի ծաղիկներ» (Բանաստեղծութիւններ). . 25 կ.
Մովսիսեան. «Մրմունջներ» (Բանաստեղծութիւններ). . . . 25 կ.
Սիմանովիչ. «Ամբողջական գործը» (Բանաստեղծութիւններ). . . 2 ր. 70 կ.
Զօպանեան. «Նահապետ Քուչակի Դիվանը». . . . . 1 ր. 50 կ.
» «Նաղաշ Յովհաթան աղուղը և Յովհաթան Յովհաթանեան նկարիչը». 1 ր. 50 կ.
» «Հայ էջեր». . . . . 2 ր. 50 կ.
Անդերսէն. «Սոխակի երգը». . . . . 01 կ.
Լագերլէօֆ. «Կարմրավզիկը». . . . . 01 կ.
Թօսունեանց. «Գործնական խոհարարական դասագիրք», երկրորդ տպագր. 75 կ.

Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «ГИРЪ». (կ.) 334. 2—1

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԳՐԻԳՈՐ ԲԱՂԱՍԱՆԵԱՆԻ

հետևեալ աշխատութիւններ՝

1) «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ» (էջ 6000, 25 հատոր) գինը 50 ր., հատորը 2 ր.։
2) «ՍԱՍՄԱՑ ԾՌԵՐԻ ՑՈՒՇԻԿՆԵՐ» (500 էջ) գինը 2 ր.։
3) «ԳՐՈՂԻ ՎԻՃԱԿԸ» (պօէմա) գինը 1 ր.։
4) ՀՈՃԿԱՆԵՑԻ ԽՈՒԴԻ» «Տարազից» (պատմ. պօէմ) գինը 1 ր.։
5) ԳԻՒՂԻ ՀԵՐՈՍԸ» «Տարազից» (պատմ. պօէմ) գինը 1 ր.։

Հեղինակի հասցէն՝ Эривань, Астафьевская № 42, магазинъ Михаила Антоняицъ, пересылать сел. Башкендъ, старш. учителю Григорію Баласанянъ. (օ.մ.) 271. 10—8

КЪ СВѢДѢНІЮ.

По дошедшимъ до меня слухамъ, нѣкоторыя лица посѣщаютъ отъ моего имени моихъ г. г. кліентовъ для пріема заказовъ, а также получаютъ задаточныя суммы. Довожу до свѣдѣнія моихъ г. г. заказчиковъ, что мною никто не уполномоченъ на подобныя сдѣлки, и что сношенія съ г. г. анонсодателями поддерживаю единолично и за дѣйствія самозванцевъ не отвѣчаю.

Съ истиннымъ почтеніемъ агентъ по сбору объявленій М. А. ГАЖОНІА.

Михайловскій пр. № 97, кв. 11. Телефонъ 9—25. (հ.) 326. 2—2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՊԱԿԷ“

յայտարարում է իւ գիտութիւն ճանապարհորդների և ապրանք ուղարկողների, որ Ընկերութեան շոգենաւ «ՖՐԻԺԻ» (նաւապետ Մէրդէսէ) մեկնում է Բաթումից Մարսէյլ հանդիպելով Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս

Հինգշաբթի, ապրիլի 24-ին (մայիսի 7-ին ն. տ.) 1914 թ.

Տեղեկութիւնների համար խնդրում են դիմել Ընկ. Թիֆլիսի գործակալ պ. Ս. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆԻՆ, իր գրասենեակում, որ գտնվում է Արմենական բազարում Գոստինի դիմաց Մանթաշեանների Հեռախօս № 7—21. 25—8

22.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է Թիֆլիսում միակ ռուսերէն լեզուով լոյս տեսնող, ԱՄԵՆԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ, բժշկական ամսագիր

„ЖУРНАЛЪ-ЛЕЧЕБНИКЪ“-Ի

1914 թ. բաժանորդագրութիւնը.

Ամսագրի նպատակն է՝ հիւանդութիւնների նախազգուշացումն և առողջութեան պահպանումն։

Ամսագրի մէջ, յայտնի բժիշկների աշակցութեամբ, պարզ և հասկանալի լեզուով բացատրվում է այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է առողջութեան և կեանքի երկարացման համար։

Բաժանորդագրվելն է ամբողջ տարվայ համար միայն «օրացոյց-բժշկարան» պրէմիայով 1 ր., (վերադիր վճ. 1 ր. 20 կ.), իսկ 3 ՊՐԵՄԻԱՑՈՎ 2 ր.

1-ին պրեմիան պատի դեղեցիկ «Օրացոյց բժշկարան» 1914 թ., իսկ 2-րդ և 3-րդ պրէմիան բաժանորդների ցանկութեան և ընտրութեան համաձայն կուղարկվեն 2 հատ հետևեալ գրքերից. 1) Домашній лечебникъ (առանձին արժէ 1 ր.), 2) Грѣхи молодости (лечебникъ секр. болѣзней 1 р.), 3) Лечебникъ домашнихъ животныхъ (1 р. 25 к.), 4) Искусственное безплодіе (1 р. 25 к.), 5) Самоучитель гипнотизма (2 р.), 6) (Полный дѣловой письмовникъ (1 р.), 7) Поваренная книга для хозяекъ (1 р.). Պրէմիաները պատրաստ են և կուղարկվեն բոլորովին ձրի լոյս տեսած համարների հետ՝ բաժանորդագրվելուց անմիջապէս։

Բաժանորդագրվել կարելի է և վերադիր վճարով՝ (налож. плат.) 20 կ. աւելի արժէքով, այսինքն բաժանորդները վճարում են պօստին պրեմիաները ստանալուց 2 ր. 20 կ.։

Հասցէն՝ Тифлисъ—М., Вознесенская ул. № 8, главная к-ра ред. „Журналъ-Лечебникъ“.

Թիֆլիսում բաժանորդագրութիւնը ընդունվում է նոյնպէս և կենտրոնական գրավաճառանոցում։ (հ. կ.) 249. 10—9

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный